Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-2-25.16-Մ3-1 ավագ մասնագետ(2023-06-29)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Փրկարար ծառայություն | Շիրակի մարզային փրկարարական վարչություն | Բնակչության պաշտպանության բաժին | ավագ մասնագետ, (27-2-25.16-Մ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս ավագ մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստան,Շիրակի մարզ, ք.Գյումրի, Կ.Դեմիրճյան23

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1.իրականացում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծերի մշակման աշխատանքները.

2. իրականացում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլանների և ծրագրերի մշակման աշխատանքները.

3. իրականացում է մարզի տարածքում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքները.

4. մասնակցում է քաղաքացիական պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցման աշխատանքներին.

5. իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության բնագավառներում պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն ցուցաբերում՝ նրանց կողմից հիմնական միջոցառումների և այլ պլաններով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու իրականացման ընթացքում:
Իրավունքները.

· կազմակերպել համապատասխան մարմինների ներկայացուցիչների հետ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ քննարկումներ, կատարել անհրաժեշտ հարցումներ, պահանջել ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումներ, փաստաթղթեր.

· պահանջել համապատասխան մարմիններից (մարզպետարան, համայնքապետարաններ, կազմակերպություններ) ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտի և քաղաքացիական պաշտպանության զույքի, ուժերի և միջոցների վերաբերյալ

· համապատասխան շահագրգիռ մարմիններից ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ, կապված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտի հետ.

· այցելել մարզի համայնքներ, տարբեր կազմակերպություններ, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտների հետ կապված փաստաթղթերի ճշտությունը և առկայությունը ստուգելու նպատակով :

Պարտականությունները.

· ուսումնասիրել մարզպետի համապատասխան որոշումների նախագծերի ամբողջական փաթեթը.

· ներկայացնել առաջարկություններ, զեկույցներ, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտին առնչվող, համապատասխան մարմիններում կատարվող աշխատանքների վիճակի մասին՝ քաղաքային և գյուղական համայնքների, կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պետերի և արտակարգ իրավիճակների պատասխանատուների կողմից ներկայացվող փաստաթղթերի վերաբերյալ.

· նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր՝ հաշվետախտակի ձևեր.

· ուսումնասիրել քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտները կարգավորող իրավական ակտերը, պատրաստել քաղաքացիական պաշտպանության ոլորտը կարգավորող հակիրճակներ և ըստ կազմված ժամանակացույցի անցկացնել դասախոսություններ Վարչությունում, Մարզպետարանում և այլ կազմակերպություններում.

· հավաքագրել տեղեկություններ քիմիական վտանգավոր օբյեկտներում ուժեղ ներգործող թունավոր նյութերի (քլոր, ամոնիակ), մարզում ճառագայթային, քիմիական և կենսաբանական իրավիճակի, ջրամբարների, ճանապարհա-տրանսպորտային պատահարների, տարերային բնույթի դեպքերի հետևանքով առաջացած վնասների վերաբերյալ և ներկայացնել ըստ ժամանակացույցի:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության կամ քաղաքացիական պաշտպանության բնագավառում՝ մեկ տարվաաշխատանքայինստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված `մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: